

WESTERN UNION MONEY TRANSFER

The fastest way to send money worldwide

SEND MONEY

With Western Union you never worry you'll always be happy

RECEIVE MONEY

Tel : (01) 601315 - 500145 - 384493 - (03) 688861/2

ԱԶՏԱԿ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶՏԱԿԱՆ ՏՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

آزதாக جريدة يومية سياسية وأدبية - الديرة للسلطة، إنشاء آذرويشيان

1000

L.Ո.ՂԻՐԳ-ՏԱՐԻ, ԹԻԻ 239 (19539) ԵՐԵՎԱՆԻԹԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1996 10 ԷՁ

House Tex

● Զոյգ պլանքէթ (240x220) 40.000 լ.ո.
● Մէկուկէս պլանքէթ (220x180) 35.000 լ.ո.
● Փոքրերու պլանքէթ (100x75) 15.000 լ.ո.

Գաւառ, Գործ Լամուտ, Անրիխա, Սարապ, Բրիտիոյի
ԲԱՑ ԵՆՔ ԿԻՐԱԿԻ ԱՄԲՈՂՔ ՕՐԸ

ՏԱՔ ԳԻՆԵՐ
ԶՄՐԱՆ
ՅՈՒՐՏԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 1997ԻՆ ՀԱՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐԻ ԽՈՍՏՈՒՄ ՍՏԱՑԱԲ ՌԻԱԶԵՆԿԹԸՆԻ ԺՈՂՈՎԵՆ

-ՔԼԻՆԹԸՆԻ ԽՈՐՀՐԳԱԿԱՆՆԵՐԸ ԶԵՆ ԹԵԼԱԿՐԵՐ ԱՐԳԵԼՔԻՆ ԶՆՁՈՒՄԸ

Լիբանանի երկէ տնտեսական եւ դիւանագիտական գե-տիններու վրայ կարեւոր քայլեր արձանագրեց, նախ՝ «Լի-բանանի Բարեկամներ»ու Ուաշինգթոնի ժողովին կալա-ցումով, ապա՝ 1997 տարուան համար մէկ միլիառ տոլարի համապօր ծանոթալուծիւններու եւ փոխատուութեանց խոստումներ ապահովելով, սակայն բարեկամներու ժողո-վէն քանի մը ժամ ետք, նախագահ Բիլլորն պաղ ջուր խառնեց ջերմ մըտնոյրտին, յայտարարելով, որ առայժմ չի ծրագրեր ամերիկացիներու Լիբանանի ճամբորդութեան դէմ

ԺՈՂՈՎԸ
«Լիբանանի Բարեկամ-ներ»ու Ուաշինգթոնի ժո-ղովր լրացուեցաւ Պէյրու-թի ժամանակացոյցով՝ ժա-մը 16ին եւ տեւեց 45 վայր-կեան: Գլխաւոր ճառատես-ներն էին Ուորըն Քրիսթա-ֆոր եւ Ռաֆիկ Հարիրի: Ներկայ էին եւրոպական արարական եւ ասիական 32 երկիրներու ներկայա-ցուցիչներ եւ միջազգային ծրագրութիւններու պատ-ւիրակներ: Ականաւոր ներկաներուն կարգին էին Էրվէ Տր Շարէթ (Ֆրան-սա), Տիք Սփրինկ (Իրլան-տա), Վիլքիմ Փոստովա-լիուք (Ռուսիա) եւ Լամ-պերթօ Տինի (Իտալիա): Ներկայ էին Եւրոպական Միութեան, Քանադայի, Գերմանիայի, Սկոտա-կան Արարիայի, Աւստր-իայի, Պելճիքայի, Պրու-տայի, Դանիայի, Ֆին-լանտայի, Յունաստանի, Ճափոնի, Քուէյթի, Լիքսեմպուրկի, Լոյան-տայի, Օմանի, Քորեո-գայի, Քաթարի, Սպա-նիայի, Սուտանի, Զուի-ցերիայի եւ ԱՄ Էմիրու-թիւններէ ներկայացու-ցիչներ:

Բացումը կատարեց Ուորըն Քրիսթաֆոր: Ան դրուատիքով խոսեցաւ Հա-րիրիի դերակատարու-թեան մասին եւ յայտարա-

րեց, որ Ուաշինգթոն գո-րովից կը կանգնէ Լիբա-նանի գերիշխանութեան, հողերու ամրոցականու-թեան եւ կը ցանկայ օտար ուժերու հեռացումը: Ան յոյս յայտնեց, որ Լիբանան դառնայ չըջանի առեւտու-րի կեդրոններէ մէկը, իսկ խոսելով Միջին Արեւելքի մասին՝ աւելցուց, որ «Լի-բանանն ու անոր դրացի-ները կրնան բարգաւաճիլ, եթէ խաղաղութիւն հաս-տատուի»: Ամերիկացի նա-խարարը ողջունեց Լիբա-նանի օժանդակելու պատ-րաստակամութիւնը յայտ-նող ժողովականները եւ յի-շեցուց, որ այս ժողովր տե-ղի կ'ունենայ ապրիլեան ծանօթ իշխման ետք իւր-եւոյցած տրամադրու-թեանց իրրեւ արդիւնք:

Աւելի ուշ, բարբեր Նի-քրլա Պրիքս յայտարարեց, որ Լիբանանի ամերիկեան օժանդակութիւնը 2 միլիոն տոլարէն պիտի բարձ-րանայ 12 միլիոնի: Օժան-դակութիւնները պիտի տրամադրուին երկրագոր-ծութեան, ենթակառոցնե-րու, կրթական, հիւանդա-նոցային եւ այլ մարգերու: Օժանդակութեանց աւելի քան 2 միլիոն տոլարի բա-ժինը կ'երթայ «Բիթլընէ-շըլըլ Քալէն»ի:

Պրիքս իստ նաեւ, որ ամերիկացիներու Լիբա-նան այցելութեան դէմ ար-

գելքին մասին որոշումը պիտի տրուի 20-30 օրէն, այսինքն՝ մինչեւ Քրիսթա-ֆորի պաշտօնավարու-թեան աւարտը, սակայն քանի մը ժամ ետք, նախա-գահ Քլինթըն, հիմնուելով իր խորհրդականներուն թեյադրանքին վրայ, յայ-տարարեց, որ արգելքը առայժմ պիտի չվերցուի:

Նիստին, ճառ մը արտա-սանեց նաեւ վարչապետ Հարիրի, որ նախապէս յրս-տակացուցած էր թէ Լիբա-նան չուրջ միլիառ տոլա-րի օժանդակութեան ակրն-կայութիւն ունի այս ժողո-վէն: Վարչապետը հակիրճ կերպով ներկայացուց Լի-բանանի ապահովութեան եւ տնտեսութեան կայու-նացման նպատակով 1992էն ի վեր առնուած քայ-լերը, խօսեցաւ մարդու իրաւունքներու, ազատու-թեանց յարգումի եւ ժո-ղովրդավարութեան մա-սին, ապա նաեւ ընդգծեց,

որ «Լիբանան կը հաւա-տայ, որ հարցերը բիրտ ու-ժով չեն լուծուիր, այլ՝ քա-ղաքական միջոցներով»: Ան ողջունի եւ շնորհակա-յութեան խօսք ուղղեց իրենց ներկայութեամբ իսկ Լիբանանի գօրակցող եր-կիրներուն:

Ժողովէն ետք, մասնակ-ցող կարգ մը նախարար-ներ գոհունակութիւն ար-տայայտեցին ժողովին մա-

սին:

Էրվէ Տր Շարէթ հաս-տատեց, որ 1997ին, Լիբա-նանի պիտի տրամադրուի մէկ միլիառ տոլարի օժան-դակութիւն, որուն 20 առ հարիւրը, այսինքն 200 միլիոն տոլար պիտի տրա-մադրուի Ֆրանսայի կող-մէ:

Փոստովալիուք եւս գոհ էր եւ յոյս յայտնեց, որ Հա-րիրի Մոսկուա յառաջի-կայ այցելութիւնը առիթ ըլլայ Ռուսիոյ օժանդա-կութեանց մանրամասնու-

նելի: Գործը պիտի վստահ-ւի Անգարայի գլխաւոր ղառախագին:

Մանսիկ է, որ Յոյեմ-րերին, ինքնաշարժի արկա-ծէ մը ետք կապով ի յայտ եկած էին պետական պա-տասխանատուներու եւ ոճ-

րային խմբակներու միջեւ: Կարգ մը փաստաթուղթեր ցոյց կու տան, որ կառա-վարական պատասխանա-տուներ ոճագործներու հետ զադտնի գործակցու-թիւն ստեղծած են, որպէս-գի «մաքրագործեն» քաղա-քական ընդդիմադիրներ: Գայթակցութեան հետե-ւանքով, ներքին գործոց նախարարը հրաժարած էր:

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 16 (ՌԷՕ-ԹԸՐ) - Ամերիկացի նախ-կին արտաքին գործոց Յ նախարարներ եւ ամերի-կացի յայ պաշտօնատար-ներ Խորալի յոյուած նա-մակի մը մէջ կոչ ուղղե-ցին, որպէսզի Ալսոյորդա-նանի եւ Կազայի մէջ հրկական ընկեցման վայ-րերը չընդարձակէ:

Վարչապետ Պենիամին Նեթանիահուի գրասենեա-կին յոյուած նամակը կոչ կ'ուղղէ Խորալիի եւ արարներուն, որպէսզի միակողմանի քայլերու չդիմեն, որովհետեւ անոնք ի վնաս բանակցութեանց ճամբով լուծումի ընտրան-քին պիտի ըլլան:

Նեթանիահուի տեղեկա-տուական գրասենեակին տնօրէնը՝ Տաւիտ Պար-իլ-յան իրրեւ պատասխան յայտնեց, թէ նամակը ստո-րագրողները իրրեւ Խորա-լիի բարեկամներ չեն ճանչցում: (Անոնց կար-գին են Ճէյմս Պէյքըր, Լս-րընս Իկրպրիկըր եւ Սայ-րըս Վանս): Խորալիի իս-կական բարեկամները ո'չ միայն մերժած են նամակը ստորագրել, այլ նաեւ անոնք միշտ իրենց գօրակ-ցութիւնը կ'արտայայտեն մեր որդեգրած քաղաքա-կանութեան հանդէպ, իստա-ն:

REGINA

Հանրաժանօր վաճառանիշերով երոպական եւ պարսկական

ԳՈՐԳԵՐ

● Առուձախ պարսկական եւ կովկասեան գորգերու
● Տնային ամէն տեսակի նուէրներ

Պերն Լամուտ. Մետրոպեան վարժարանին մօտ:

ԱՅՅԵԼԷ ԵՒ ՓԱՍՏԷ ՄԵՐ ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ԳԻՆԵՐԸ

DROP 8

ԱՐԱՆՑ ՀԱԳՈՒՍՏԵՐՈՒ ՄԻՇՏ ՆՈՐ ԵՒ ՃՈՆ ՀԱՒԱՔԱՊՈՅ

ԶԱԼՔԱ, ՍԻԹԷ ՄՈՒՍԱ, Ա. ՅԱՐԿ

Վաճառատունը բաց է Կիրակի մինչեւ Կէսօր

DEI MASSIMI - BERNHARDT - BRAMANTE - IVY OXFORD - DALMINE - VERRI JEANS - GEZEQUEL - PINO ZENALDI - JUPITER - PAUL MORETTI - AQUA & SPORTS CLUB

Pour l'homme actuel

Alpha

Achrafieh - Hamra - Jdeideh

DEI MASSIMI - BERNHARDT - BRAMANTE - IVY OXFORD - DALMINE - VERRI JEANS - GEZEQUEL - PINO ZENALDI - JUPITER - PAUL MORETTI - AQUA & SPORTS CLUB

LES FÊTES ÇA SE FÊTE AVEC NOS

PRIX CADEAUX SUR TOUTE LA NOUVELLE COLLECTION ITALIENNE BARBERIS

bolmard

Tél. : (01) 895376 - ZALKA

UN TAPIS C'EST UN CADEAU POUR LA VIE

■ Tapis Iranien BALLOUCH, fait main (100x200) plusieurs motifs et coloris, à 269.000L.L. la pièce

■ Tapis Iranien GHOUGHAN, fait main (120x200) plusieurs motifs et coloris, à partir de 449.000L.L. la pièce

■ Tapis Iranien NAIN, fait main (120x200) plusieurs motifs et coloris, à partir de 599.000L.L. la pièce

■ Descente de lit Chinoise, 100% laine à partir de 59.000L.L. la pièce

Crédit sur 10 mois sans intérêts

ouvert 7 jours sur 7 de 8h à 20h

tapi lama

Le monde du tapis

Joyeux Noël et Bonne Année

Badaro - B. Hammoud - Antélias - Sarba - Tripoli

«ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ» 128 «ԵՐԵՍՓՈԽԱՆ»ՆԵՐՈՎ

Մանուկներու իրաւունքներու պաշտպանութեան եւ անոնց դիմագրաւած հարցերը լուծելու աշխատանքներու ծիրին մէջ եւ անհախճաբաց նախաձեռնութեամբ մը, վաղը տեղի պիտի ունենայ «Մանուկներու Խորհրդարան»ի առաջին նիստը, որուն ոլիտի նախագահն Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիին Պըրրի։ «Մանուկներու Խորհրդարան»ը բաղկացած ոլիտի ըլլալ Ցէն 16 տարեկան 128 «Երեսփոխան»ներէ, որոնք կը ներկայացնեն լիբանանեան բոլոր համայնքներն ու շրջանները։ Անոնք «ընտրուած են ոլետական ու ոչ-ոլետական դպրոցներէն, իրենց շարքերու մէջ ունենալով նաեւ անկարներ եւ աշխատող մանուկներ։

«Խորհրդարան»ի նիստը տեղի պիտի ունենայ «Մա-նուկներու Գերագոյն Խորհուրդ»ին եւ ԵՈՒՆԻՍԷՖի նախաձեռնութեամբ։

ԼԵՌՆԱԼԻԲԱՆՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ՝ ՄԻՆՁԵՒ 2 ՏԱՐԻ

Կ'ԸՍԷ ԺՈՄՊԼԱԹ

Գաղթականներու հարցերու նախարար Ուալիտ Ժումպլաթի նախատեսութեամբ, Լեռնալիբանանի գաղթականներու վերադարձը պիտի ամբողջանայ մինչեւ երկու տարի։

Խարրուպի շրջան այցելութեան մը առիթով, Ժոմպլաթ անհրաժեշտ համարեց նուազ գարգացած շրջաններու բարգաւաճումը, որպէսզի Լիբանանի գանազան շրջաններուն միջեւ գոյանայ ընկերային - տնտեսական հաւասարակշռութիւն։

Միւս կողմէ, գաղթականներու սնտուկի փոխ նախագահ Ապտէլ Համիտ Նասէր այցելեց մարոնիներու պատ-րիարք կարտինալ Մֆէյրի եւ անոր ներկայացուց գեկու-ցագիր մը, սնտուկի կատարած աշխատանքներուն մա-սին։

Ըստ գեկուցագիրին, ցարդ սնտուկէն օգտուած են Ծուֆի, Ալէյի, Պաապտայի եւ Մեթնի շրջաններէն 124 գիւղեր։ Նիւթական օգնութիւն տրամադրուած է 19 հազար ընակարաններու շինութեան կամ վերանորոգ-ման համար։ Սնտուկի օգնութեամբ, վերանորոգուած են նաեւ 36 եկեղեցիներ։

ՖԱՕԷՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆՆԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԱՐԶԻՆ

ՄԱԿի ծիրին մէջ գործող Սննդանիւթի եւ Երկրա-գործութեան Միջնագգային Կազմակերպութեան (ՖԱՕ) ընդհանուր տնօրէն Ժաք Տիուֆի, որ Պէյրութ ժամանած էր Կիրակի գիշեր, երկկ այցելեց նախագահ Իլիսա չը-րաուէրի եւ խորհրդարանի նախագահ ՆեպիՑ Պըրրիի, անոնց հետ քննարկեց Լիբանանի եւ ՖԱՕի միջեւ գոր-ծակցութեան ծրագիրներ։

Տիուֆ յայտարարեց, որ ՖԱՕ պատրաստած է Լիբա-նանի մէջ ի գործ դրուելիք ներդրումի շարք մը ծրա-ցիրներ՝ 175 միլիոն տոլար արժողութեամբ։ Այդ ծրա-ցիրները պիտի հետապնդեն երկրագործութեան մարզի գարգացումը։

ՊԼԱԼԱՊԷԲ - ԷԵՐՄԷԼԻ ԶԼՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱԿի ծիրին մէջ աշխատող Պաալպէ - Էբմէլ շրջա-նի երկրագործական բարեկարգումի ծրագիրի տնօրէն Մոհամէտ Ֆարժանի յայտարարեց, որ այս ծրագիրին ամբողջացման համար անհրաժեշտ է 112 միլիոն տոլար։ «ՄԱԿի կողմէ տրամադրուած մէկ միլիոն 800 հազար տոլարը շատ չնչին գումար մըն է այս ծրագիրը իր աւարտին հասցնելու համար», ըսաւ Ֆարժանի։

ԼԻԲԱՆԱՆԷՆ ԴՈՒՐՍ ԱՊՐՈՂՆԵՐՈՒ ԶԻՆՈՒՈՐՈՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Լիբանանեան քանակի ընդհանուր հրամա-նատար Վօր. Էմիլ Լահուտ հրապարակեց հրա-մանագիր մը, ըստ որուն, Կինուորական ծառա-յութեան տարիքի մէջ եղող, բայց Լիբանանէն դուրս ապրող քաղաքացիները ալ պատ պիտի կա-ցուցուին պարտադիր ծառայութենէն։ Հրամա-նագիրը կը նշէ, որ այս կարգադրութիւնը ի Վօ-րու է միայն անոնց համար, որոնք առնուապէս 10 տարիէ ի վեր կը գտնուին Լիբանանէն դուրս։

Արտերկրի լիբանանցիներու հարցերու նա-խարար Թալալ Արալյան ողջունեց Վօր. Լահուտի որոշումը։ «Ասիկա առիթ պիտի տայ արտերկրի երիտասարդ լիբանանցիներուն, որ առանց մտահոգութեան այցելէն հայրենիքը»։ Ըսաւ Արա-լան։ Ան աւելցուց, որ այս որոշումը պիտի նպաս-տէ նաեւ արտերկրի լիբանանցիներու Լիբանան մնալուն վերադարձին։

ՄԱՀԱԶԴ

Մեթր խաչիկ Պապիկեան եւ գաւակուեք Տէր եւ տիկին Արա եւ Հուրի Պապիկեան եւ գաւակուեք Տիկին Իրմա Պապիկեան Կրացցի Տէր եւ տիկին Երուանդ եւ Այտա Պապիկեան եւ

գաւակուեք եւ համայն ազգականներ կը գլուժեն իրենց մօր, գոքան-չին, մեծ մօր եւ հարազատին՝

ԵՐԱՆՈՒՀԻ ՊԱՊԻԿԵԱՆԻ (Ծննալ՝ ՍԷՄԻՔԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Շարաթ, 14 Դեկտեմբեր 1996ին։ Թաղանա արարողութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբ-թի, 16 Դեկտեմբեր, ընտանեկան սեղծ շրջանակի մէջ.
•Ներկայ ընդունիլ իբրեւ մահազո։
•Ցաւակցութիւնները պիտի ընդունուին Երեքշաբթի 17, Չորեքշաբթի 18 եւ Հիգզաբթի 19 Դեկտեմբերին, հանգուցեալի գաւկիմ՝ մէթր Խաչիկ Պապիկեանի բնա-կարանը, Էշրեֆիէ։ Մարիա՝ ձեհնջան փողոտայ, Սա-լամի դաշտին վալրեջքին, Պապիկեան շէքը, Ժրդ յարկ։

ՆԱԲՈՒՐԱՅԻ ԺՈՂՈՎԸ՝ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴԱՆԱԽԵՐՈՒ «ՇՈՎԱՆԻՒՆ» ՏԱԿ

Ապրիլեան Զինադուլի Հսկիչ Յանձնախումբը, երէկ, Նաբուրայի մէջ երկ-րորդ նիստ մը գումարեց, քննարկելու համար Իսրա-յէլի կողմէ Լիբանանի դէմ ներկայացուած անհիմն բողոքը։ Մանսթէ կ, որ Իս-րայէլ յիբանանեան դի-մադրութիւնը ամբաստա-նած է հիւսիսային Իսրա-յէլը «Քաթիուշա» տիպի հրթիռներով ուժրակոծելու յանցանքով։

Մինչեւ երեկոյ շարու-նակուած ժողովին, րուռն րանավէճ ծագեցաւ մէկ կողմէ՝ յիբանանեան եւ սուրիական ու միւս կող-մէ՝ իսրայէլեան պատուի-րակութեանց անդամնե-րուն միջեւ։ Սուրիական պատուիրակութիւնը նկա-տել տուաւ, որ իսրայէլեան բողոքը արդարացման ոչ մէկ հիմք ունի, մանա-ւանդ, որ Իսրայէլ ամէն օր կը ուժրակոծէ Լիբանանը, որ սակայն բողոք չի նե-րկայացներ, երբ մարդկա-յին գոհեր չեն արձանագրո-ւիր։

Մինչ Յանձնախումբը ժողովի մէջ էր, իսրայէլ-եան պատերազմական Յ օդանաւեր կէս ժամ շարու-նակ ցածէնթռչէք կատա-րեցին Նաբուրայի վերեւ։

ԻՍՐԱՅԷԼԻ ՅԵՏ ԳՈՐԾԱԿՑԷԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ

Զինուորական մնայուն ատեանը երէկ սկսաւ դա-տավարութիւնը 24 անձերու (որոնցմէ մաս մը՝ ի քացա-կայ ու լութեան), որոնք ամբաա-տանուած են Խս-րայէլի հետ գոր-

ծակցելու, առանց արսօնութեան Խս-րայէլ այցելելու եւ Վօր. Դալի Քը-նիաանի եւ Էլի Հը-պէլքալի մահա-փորձ կազմակեր-պած ըլլալու յաւ-ցանքներով։

Դատավարու-թեան սկզբնաւո-րութեան, արձա-նագրուեցաւ մը։ Յայտարարուե-ցաւ, որ ցարդ փախստական 2 մեղադրեալներ անմնատուր եղած են։

Դատարանը հարցաքննեց քա-նի մը մեղադրեալ եւ կարգ մը փաա-տեր։

ՄԱՀՄՈՒՏ ՄԷՅՍ ՄԱՀԱՅԱԻ

Պար Իլիասի մէջ երէկ տեղի ունեցաւ «Հարիւրի հաստատութեան» Պեքաա-լի շրջանի տնօրէն Մահ-մուտ Մէյսի յուղարկաւո-րութիւնը, որուն ներկայ եղան իշխանութեան երեք պետերու ներկայացուցիչ-ները եւ րազմաթիւ այլ պա-տասխանատուներ։

Մէյս մահացաւ երէկ առաւօտուն։ Ան Շարաթ օր վիրաւորուած էր մութ պայմաններու տակ։ Վիրա-ւորուելու պահուն անոր ձեռքին մէջ ատրճանակի գոյուլները կարգ մը լրա-տու աղբիւրներու կողմէ հիմք հանդիսացաւ հաղոր-դելու, որ ան դիմած է անձ-նասպանութեան։ Նշեք, որ հանցուցեալը եղբայրն է երեսփոխան Մոհամէտ Ալի Մէյսի։

Իսրայէլացիներու այս քայլը միեց Յանձնախում-բի անդամներէն մէկը րոսե-լու, որ «Մենք մեզի ոչ թէ ժողովասրահի, այլ օդա-կայանի մը մէջ կը գգանք»...

ԻՒԱԱՏ. «ՀՐԹԻՌՆԵՐ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՊԷՏՔ ԶՈՒՆԻՆՔ»

«Հըղլալլա»ի քաղաքա-կան խորհուրդի նախա-գահ, երեսփոխան Մոհա-մէտ Ռաատ երէկ յայտա-րարեց, որ Հարաւի Դի-մադրութիւնը պէտք չի գգար դէպի հիւսիսային Իսրայէլ հրթիռներ արձա-կելու՝ շարունակելու հա-մար գրաւող ուժերուն դէմ իր պայքարը։ «Դիմադրու-թեան կամքը յաջողեցաւ շրջանցել բոլոր արգելքնե-րը եւ ապրիլեան յարձա-կումէն դուրս գալ աւելի գօրացած», ըսաւ Ռաատ։

Ռաատ անհաւանական համարեց Լիբանանի վրայ իսրայէլեան յայնածաւալ նոր յարձակում մը։ «Եթէ Իսրայէլ դիմէ նման քալ-քալի, ապա անոր հնձելիքը միայն նոր վնասներ պիտի ըլլան», որ վառելիքի կարգ մը շրջաններ, մինչ պատերազմական օդանա-ւեր կեղծ յարձակումներ գործեցին ուժրակոծող շրջաններուն վրայ։

ԶԻՆԱԴՈՒԼԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ ԶԱԽՈՂԱԾ Է ԻՐ ԱՌԱՔԷԼՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կ'ԸՍԷ ՇԷՅՆ ԲԱՌԻՔ

«Հըղլալլա»ի Հարաւի րաժանմունքի ղեկավար չէյի Նեպիլ Քաուք գգուէացուց Իսրայէլը՝ Լիբանանի վրայ նոր յարձակումի մը հետեւանքներէ եւ չեջտեց, որ Իսրայէլ կը շարունակէ մնալ «դիմադրութեան թիրա-խը»։

Շէյն Քաուքի յայտարարութիւնը կատարուեցաւ չէյի Ապտէլ Լաթիֆ Ամինի սպանութեան առաջին տա-րեդարձին առիթով տեղի ունեցած հանդիսութեան մը ընթացքին։

Ան ցաւ յայտնեց, որ Ապրիլեան Զինադուլի Հսկիչ Յանձնախումբը ձախողած է Հարաւի քաղաքային ընակ-չութիւնը իսրայէլեան ոճիրներէն պաշտպանելու իր պարտականութեան մէջ։ «Այդ ոճիրներուն դէմ պալ-քարելու համար մենք կը նախնորենք դիմելու հերոնա-կան գիթմիութիւններու, քան բողոքներ ներկայացնել յանձնախումբրին», չեջտեց «Հըղլալլա»ի պատասխա-

նատուն։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

•ԿԻԹՈՒԹԵԱՆ եւ մարմնամարդիկ նախարարութեան ընդհանուր տնօրէնը երէկ վերադարձաւ Փարիզէն, Փրանսացի պատասխանատուներու հետ մարմնամար-դի վերաբերեալ գործակցութեան համաձայնագիրներ կնքել ետք։

•ԵՐԵՍՓՈԽԱՆ Պահիա Հարիրի երէկ մեկնեցաւ Քուէյթ, ուր պիտի մասնակցի իսլամական աշխարհին մէջ կնիւթ քաղաքական դեռակատարութեան նուիրուած Միջազգային Խորհրդաժողովի մը։

•ՎԱՐՁԱԿԱՆ բարեկարգումներու հարցերու նախա-րար Պշարա Մորհէժ երէկ մեկնեցաւ Գահիրէ, մասնակ-ցելու համար վարչական բարեկարգումի Արաբական Լիկայի համագումարին։


•ԱՄԵՐԻԿԵԱՆ ղեկավանտան գործավար Ռոն Շլալ-քըր հաղորդեց, որ մօտ ապագային Լիբանան պիտի այցելէ ամերիկեան պատուիրակութիւն մը, յիբանանցի պատասխանատուներու հետ խորհրդակցելու համար թմրեցուցիչի դէմ պայքարի միջոցներուն շուրջ։ Շլալ-քըր ըսաւ, որ Լիբանանը թմրեցուցիչի տարանցումի կեդրոն նկատող ամերիկեան տեղեկագիրը չ'անտեսը թմրեցուցիչի դէմ պայքարի ձածրուն Լիբանանի իրա-գործումները։

•ՄԱՄԼԱՑ սենտիքայի ընդհանուր ժողովը՝ երէկ ընտ-րեց սենտիքայի քաղաքական րաժինի նոր խորհուրդը, որ րադկացած է 12 լրացողներէ։ Խորհուրդի անդա-մներուն շարքին են Ռաֆիք Խուրի, Դասսան Թուէյնի, Մոհամէտ Պաալպաքի, Թալալ Սալման եւ Հասսան Սապ-րա։

«ԱԶԴԱԿ»Ի ԶՈՆՏԻՆ

•Երանունի Պապիկեանի մահուան առիթով, Թիւթէլեան ընտանիք 100.000 լ. ո.










ԵՆՈՐՀԱԴՈՐԷ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԳԸ

Հայերէն, Անգլերէն եւ Ֆրանսերէն մակագրութեամբ ԶԱՐՏԵՐՈՎ

- Ամանորի գարդարանքներու եւ մոմերու ճիշտ հաւաքածոյ։
- Նուէրներ՝ բոլոր տարիքի եւ ճաշակի յարմար։
- 1997ի աժանտաներ եւ հաշուապահական տետրակներ։

CARAVELLE, Zalka, ԳՐԱՏՈՒՆ ՈՒՐՖԱԼԵԱՆ, Պուրճ Համուտ

Բաց ենք Կիրակի օրերը, Դեկտեմբեր ամսուան ընթացքին

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԵԱՆ ԺՈՂՈՎԷՆ ՍՊԱՍՈՒՈՂ ՊԱՏԳԱՄՆԵՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի Ուաշինկթըն մեկնած է, հաստատ պիտնալով, որ Նիւթական յաղթանակով պիտի վերադառնայ Պէյրութ. երեսփոխանական ընտրութիւն-ներէն յ վեր իր արձանագրած պարտութիւններէն ետք։ Այսպէս հաստատած է անոր Պէյրութի ամերիկացի դես-պանը։

Դիւանագիտական աղբիւրներ յայտնած են, որ այ-լեւս գաղտնիք չէ, որ «վարչապետ Հարիրի կը վաշել ամերիկեան գօրակցութիւն, որ անոր կ'արտօնէ շարու-նակել մնալ երկրորդ իշխանութեան գլուխը։ Այս պատ-ժառով, Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Քլին-թըն նախագահական ընտրութիւններու միջոցին, անոր տրամադրած է իր «արժէքաւոր ժամանակէն»։ Աղբիւր-ները աւելցուցած են, որ գաղտնիք չէ նաեւ, որ «Լիբա-նանի Բարեկամներ»ու խորհրդաժողովը կը հաստատէ, որ Լիբանան պիտի մնալ միջազգային քարտէսի վրայ, հակառակ անոր, որ Միջին Արեւելքի խաղաղութեան գործողութիւնը բարդացած է։ Այս բողոքին իբրեւ փաստ՝ խորհրդաժողովը Լիբանանի պիտի տրամադրէ յայն օժանդակութիւններ։

Սակայն րազմաթիւ նախանշաններ յ յայտ եկած են ժողովէն առաջ եւ վերջ։ Լաւատեղեակ աղբիւրներ յայտ-նած են, որ ուաշինկթընեան հանդիպումը ոչ միայն տնտեսական երեսունի, այլ նաեւ քաղաքական։ Անիկա կը մտնէ Միջին Արեւելքի րանակցութիւններու ընթաց-քին մէջ։

Իսկ թէ՛ նախագահ Հըրաուիի նամակը, ուղղուած՝ նախագահ Քլինթընի, կը մտնէ Հըրաուի - Հարիրի նեղ յարաբերութեան ծիրին մէջ եւ կը փորձէ յուսարձակնե-րը խել վարչապետէն՝ ինքզինք փաստելու նպատակով, սակայն միւս նամակները աւելի խոր եւ լուրջ մօտեցում ցուցաբերած են։

Այս նամակներէն առաջինը կը գուզադիպէ նախա-գահ Հաֆէզ Ասադի հետհրդարանի նախագահ Նե-պիՑ Պըրրիի հանդիպումին, այն միջոցին, երբ վարչա-պետը կը պատրաստուէր Ուաշինկթըն մեկնելու։ Լիբա-նանեան - սուրիական քաղաքակաւութեան մասնագէտ-ներու ալլեւ ծանօթ է, որ Սուրիոյ նախագահը ո'չ միայն ըովանդակութեամբ հետաքրքրուած է, այլ նաեւ ար-տաքին երեւոյթով եւ ժամանակամիջոցով, որոնք ընդ-հանրապէս յստակ պատգամներ կ'ըլլան։ Աղբիւրները դիտել տուած են, որ երկրորդ նամակը, որ աւելի կարե-ւոր է, կը գուզադիպի Լիբանան - Սուրիա գերաստիճա-նին, որուն ներկայ պիտի ըլլան նաեւ Պըրրի եւ Հարիրի։ Մանսթէ կ, որ այս գերաստիճանը պիտի գումարուէր յառաջիկայ Յունաւրի կէսերուն, որ Սուրիա - Լիբա-նան Գերագոյն Խորհուրդի ժողովի թուականն է, սա-կայն անոր արագ գումարումը գայն յստակ պատգա-մներու շրջագոյին մէջ դրած է։

Նոյն աղբիւրները յայտնած են, որ երրորդ նամակը, որ աւելի յստակ էր, կ'անդրադառնար Ուաշինկթըն մեկնող պատուիրակութեան. Աղբիւրները յայտնած են, որ արտաքին գործոց նախարար Ֆարէս Պուէյզի պատ-ւիրակութեան՝ անակնկալ միանալի տուրիական փա-փաք էր, որպէսզի խորհրդաժողովին մէջ հաղորդակ-ցութեան կողմնակի «ձամբաներ» չ'ըացուին։

Աղբիւրները նկատած են, որ այս խորհրդաժողովը, որուն Սուրիա գօրավիզ է իբրեւ Նիւթական եւ բարոյա-կան յաղթանակ Լիբանանի համար, սակայն ան կարգ մը վերապահութիւններ յայտնած է, այն մտաւախու-թեամբ, որ խորհրդաժողովը ստանալ քաղաքական եւ ապահովութեան այլ հեռանկարներ, ինչպէս, օրինակ, րաժնը Սուրիա - Լիբանան ընթացքը՝ խաղաղութեան րանակցութիւններուն մէջ։

Աղբիւրները իրարու կը կապեն վերոյիշեալ կարծի-քին եւ Հարաւի մէջ տեղի ունեցած պարգացումները։ Ասիկա կը շանակէ, թէ շատ հաւանական է, որ նման քայլեր աւելուին ապագային։

ՃՈՆԻ ՄԸՆԱՅԷՐ

(«ՏԻԱՐ»էն)

ԱՐՑԱԽԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԶՈՆՏԻՆ

•Երանունի Պապիկեանի մահուան առիթով, Թիւթէլեան ընտանիք 200.000 լ. ո.

ԳՈՒՐԳՈՒՐԱՆՔ ՄԱՅՐԵՆԻՈՆ

ԿԱՐԳԱԼ ԵՒ ԸՆԹԵՈՆՈՒԼ

Նախորդ նշմարովս բառական երկար խօսեցալ այս եր-կու բառերուն մասին, յասկապէս երկրորդին. բայց այս մէկը նախորդին շարունակութիւնը չէ։ Այս նշմարովս պիտի խօսիմ *կարդալ* եւ *ընթեռնուլ* բառերու նշանակու-թեան մասին։ Ուման կրնան մտածել, թէ ա՛յ չափք կ'անցը-նեմ։ Խո՛նչ է, այս բառերուն իմա՞սան ալ բացատրութեան կը կարծասի։ Այսպիսիները բող չանագարեմ, որովհետեւ պիտի տեսնեն, որ այսանդ ալ կան բաներ, որոնք՝ արժանի են ուշադրութեան եւ հետաքրքրական ըլլալէ չեն դուրիր։ Սկսելու համար՝ փորձենք՝ Բարգմանի սաղմոսերգունին հետեւեալ նախադասութիւնը. «Ես առ Աստուած կարդա-ցի, եւ նա լուսն ի ձայնի խմում»։ Այսինքն՝ «Ես Աստուծոյ կարդացի, եւ ան լսեց ձայնս»։ Ինչպէս կը նկատէ՛ք, աշ-խարհարարեան ըմբռնումով՝ այսանդ կայ բան մը, որ հեղուստի չ'ընթանար. ինչո՞ւ մէկ կողմէ՛ր *կարդացի*, իսկ միւս կողմէ՛ր՝ *լսեց*. Խո՛նչ կապ ունի այս երկուքին միջեւ։ Պայմա՞ն է, որ Աստուած լսէր իմ կարդալս. կրնա՞ր՝ հասկ-նալ, ըմբռնել, հետելոյ, տեսնել, բայց սաղմոսերգուն կ'ըսէ՝ *լսեց*։ Կարելի է ենթադրել, թէ սաղմոսերգունը բարձ-րածայն կը կարդար, ու Աստուած ալ լսեց անոր ձայնը։ Շատ լուս, բող այլապէս ըլլալ։ Հապա ինչպէ՞ս պիտի Բարգ-մանենք՝ հետեւեալները.

- Արի՛ կարդալ գտէր Աստուած Բո։
- Կարգային առ Շմառն եւ աղաչէին ձեռն տալ։
- Կարգաց Յիսուս ի ձայն մեծ։

Ինչպէ՛ս կարելի է կարգալ Աստուածը կամ կարդալ Շմառնին։ Իսկ երրորդ օրինակին մէջ՝ պէ՞տէ է այնպէս ենթադրել, թէ Յիսուս բարձրածայն կը կարդար։ Չմոռ-նանք, որ այս նախադասութիւնը գրողը Ղուկաս առնաւ-րանիչն է, որ կը նկարագրէ Յիսուսի վերջին եւ վերջնա-գոյն վայրկեանը խաչին վրայ՝ «Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ. Հայր, ի ձեռս Բո առնելով՝ գիտցի իմ. գաս իբրեւ ասաց, հեան գիտցի»։ Կրնա՞նք այնքան միամիտ ըլլալ կարծելու համար, որ հոգին առնելով, պահիկ մը առած Յիսուս գիրք մը ենթոքն ու կարդաց։ Ո՛ր կրնար պահած ըլլալ այդ գիրքը, երբ ոչ իսկ գրպան ունէր, բանի մերկ էր. կամ ո՞ր ձեռքով բռնեց գայլն ու կարդաց, բանի ձեռները գամուած էին խաչափայտին։

Հրաչեայ Անտոնեանը կը վկայէ, որ *կարդալ*–ը բնիկ հայ-կական բառ է, այսինքն՝ ան հայուն բնառաւադարին մաս կազմած է այն օրերէն, երբ հայը կը բաժնուէր հնդեւրո-պական մեծ քնտանիքէն ու նոր հայրենիք մը կը փնտըլ իրեն համար. քսեմք՝ մօտաւորապէս եինգ հազար տարի մեկմէ առաջ։ Արդ, եինգ հազար տարի առաջ ի՞նչ կրնար կարգալ հայը, բանի ոչ գիր ունէր, ոչ գիրք ունէր։ Դիր ու գիրք չունէին հնդեւրոպական միւս ցեղերը եւս. այսու–հանդերձ հայն ալ *կը կարդար* այլ ցեղակից ժողովուրդ–ներն ալ *կը կարդային*։ Հետաքրքրական չէ՞, սկրիպլ բն–թերցող, որ, մարդիկ կարդային, երբ կարգալիք բան չկար տակալ ին աշխարհի վրայ։ Ինչպէ՛ս լուծել այս հանելուկը։

Խորիքն մէջ հանելուկ գոյութիւն չուի. հարցը այն է. միայն, որ *կարդալ* բառը վաղ անցեալին չուէր այն նշա-նակութիւնը, գոր առ ունի այսօր, այլ պարզապէս կը նշանակըր *ձայնել, գոչել, աղաղակել, օգնութեան կանչել*։ Երբ բառիս այս նշանակութիւնները աչքի առաջ ունե-նանք, ա՛յ՛ դիտել կ'ըլլալ մեկնաբանել կամ պարզասկս հասկնալ վերոքերպ բոլոր նախադասութեանց իմաստ–ները. վերասին կարգալն՝ գտնել ի մտի ունենալով բա-ռիս հոմանիշները ու պիտի անցրապառնանք։ Ուրեմն իր կեանքին վերջին վայրկեանին Յիսուս ոչ Բ. գիրք *կար-գաց*. այլ բարձրածայն *աղաղակեց* ու ապա հոգին առնե-լից։ Սաղմոսերգուն Աստուծոյ *օգնութիւնը կայցեց*, իսկ Աստուած ալ լսեց անոր խնդրանքը եւ այլն։

Դարձեալ Անտոնեան է. վկայողը. *ընթեռնուլ* բառը ու-նեցած է նիշով նոյն նշանակութիւնները, այսինքն՝ *ձայնել, գոչել, աղաղակել, օգնութեան կանչել*։ Այս կը նշանակէ, որ մենք չենք ունեցած բառ մը կամ բառիք, որոնք *կարդա-լու* նշանակութիւնը ունեցած ըլլալու, անշուշտ այս պա-րագրային ի մտի ունեմ *կարդալուն* ներկայ՝ աշխարհա-բարեան նշանակութիւնը (ֆրանսերէն՝ lire, անգլերէն՝ to read). հապա ի՞նչ նաժըով *կարդալ* եւ *ընթեռնուլ* բառերը հետագային ստացան իրենց այսօրուան նշանակութիւնը եւ դարբնցան նշանակիչ՝ *ձայնել, գոչել, աղաղակել* եւ *օգնութեան կանչել*։

Այս իմաստափոխութիւնը ըմբռնելու համար՝ մենք պարտաւոր ենք պարմական հալածած մը կատարելու եւ պատկերացնելու այն եկի գաբերը, երբ գիրքը հագուա-գիւտ իր մըն էր, շատ սուղ արժող եւ շատ դժուար ստա-ցուող, որմէ հագուազիւս եւ օրինակներ կը գտնուէին եկե-ղիցիներու արամադաութեան տակ եւ շատ աւելի հագուա-գիւտ օրէն՝ անհատներու հով։ Անոնց ընթերցումը կատա-րելու համար՝ մէկը բարձրածայն կը կարդար, գրեթէ ազա-րակելու ձեւով, որպէճի հասաացեալները կարեւնային հետեւել ու հասկնալ։ Իրենց իրերցումը բարձրածայն կը կատարէին նաեւ անոնք, որոնք Բարգաւորին, նախարարին կամ առասպելական մէկ հրովարտարի կը կարգային երա-պարակին վրայ, բազմում ինքներու առջեւ։ Իրենց ընթեր-ցում մը բարձրածայն կը կատարէին նաեւ այն պատգամա-ւորները, որոնք Բարգաւորին մէկ նամակը կը հասցնէին ալլ իշխանաւորի մը։ Մէկ խօսով՝ բոլոր ընթերցումները բարձրածայն տեղի կ'ունենային։ Պատմական այս փուլին, ահա, *կարդար* կամ *ընթերցիր* եւ *աղաղակել, գոչել* կամ *ձայնել*ը հետգիտէ հոմանիշներ սկսան դառնալ։ Այս առաջին իմաստափոխութիւնը կը բաժնէր իմաստի ըն-կառնակումը հայոց մէջ պէտէ է տեղի ունեցած ըլլալ Ոսկեդարէն բառական հաք, բանի որ Ե. դարու *կարդալ*–ը հայերէնի մէջ միայն *աղաղակել, գոչել, ձայնել* կը նշանա-կէր։

Շատ աւելի ուշ, երբ գիրքը կամ ընթերցանութեան որեւէ առարկայ սկսաւ աւելի մտաշելի դառնալ եւ վերածե-լեցաւ անհատական սեփականութեան, միայն այն տանէ, որ *կարդալ* եւ *ընթեռնուլ* բառերը սկսան կամաց–կամաց կորսնցնել իրենց վաղմի՛ն *աղաղակել, գոչել* իմաստները եւ նշանակեցին միայն *ընթերցել*՝ բառիս աղծման նշանա-կութեամբ։

Ներկայիս այլիս *կարդալ*–ին մէջ աղաղակելու իմաստը ընդմիշտ չ'աւցած է, եւ ան միայն *ընթերցել* կը նշանակէ. այլ հարց է, թէ մէկը բարձրածայն կը կարդայ կամ լուռ ու ինքնամփոք կամ քիւ, ինչպէս կ'ըսենք՝ եկեղեցական եզր մը գործածելու համար։ Թիւ կը նշանակէ *անձայն*. յիշեցէ՛ք *իւս պատարագը*, որու ընթացքին պատարագիչին ձայնը քնու չ'ենք լսել։ Թիւիւ հալանիշն է *ձայնաւորը* (ձայնաւոր պատարագ)։

ԱՐՄԵՆԱԿ ԵՂՎԱՅԵԱՆ

Լ. Ղ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Լ.Ղ.Հ.Ի ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈԶԱՐԵԱՆ ՅՐԱՆՍԱՅԻ ՄԷԶ

Արցախի նախագահ Ռուպէրթ Քոչարեան միջազգա-յին դիւանագիտական ակադեմիայի Հրաւերով Յրան-սա կը գտնուի։

Այս առիթով Արֆորվիլի քաղաքապետարանը ընդ ու-նելութիւն մը կազմակերպեց ի պատիւ նախագահին։

Արֆորվիլի քաղաքապետ եւ ծերակոյտին մէջ հայ-ֆրանսական բարեկամութեան խումբի նախագահ Ռը-նէ Ռուկէն, ողբունելով Արցախի նախագահը ըսաւ, որ անհրաժեշտ է պաշտպանել Արցախի դատը. հաշուի առնելով անոր պատմութիւնն ու զարգացումը եւ ժողո-վուրդին ազատ ապրելու կամքը։ Ան խոստացաւ ստանձ-նել Արցախի դատի պաշտպանութիւնը եւ ձեակցել անոր նախագահին՝ Ռուպէրթ Քոչարեանի։

Նախագահ Քոչարեան խօսք առնելով՝ ներկայացուց հինգ տարուան անկախութեան ընթացքին Արցախի ձեռք բերած ռազմական, քաղաքական եւ տնտեսական նուա-ճումները։

Քոչարեան նշեց, որ Արցախ ստեղծած է կանոնաւոր բանակ եւ այդ բանակով գինադուլ պարտադրած է ազե-րիններուն եւ կրցած է Արցախի խնդիրը դարձնել ամբողջ հայութեան խնդիրը։

ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ

Լ. Ղ. Հ. կառավարութիւնը Սեպտեմբեր 27ին ընդ ու-նած է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Քա-ղաքացիութեան Հիմնական Սկզբունքներու Մասին» որոշումը։

Լ. Ղ. Հ. քաղաքացիութեան իրաւունք կարելի է ստա-նայ Լ. Ղ. Հ. նախագահին որոշումով, համապատաս-խան փաստաթուղթեր ներկայացնելէ ետք։

Լ. Ղ. Հ. արտաքին եւ ներքին գործոց նախարարու-թիւններուն եւ ազգային անվտանգութեան պետական վարչութեան կողմէ ստանալով անհրաժեշտ մանրամաս-նութիւններ՝ կառավարութիւնը կու տայ իր որոշումը եւ ապա սահմանուած կարգով գանդնք կը ներկայացնէ Լ. Ղ. Հ. նախագահին։

Հ. Յ. Դ. 106ԱՄԵԱԿ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷԶ

Հ. Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի «Նիկոլ Դուման» ակումբին մէջ նշուեցաւ Հ.Յ. Դ. 106ամեա-կը, նախաձեռնութեամբ Ստեփանակերտի «Արբուր Մկրտչեան» Կոմիտէի։

Հանդիսութեան ընթացքին բանախօսեց Արցախի Կ. Կ. պատասխանատու ընկ. Արմէն Սարգսեան։ Խօսելով

կուսակցութեան անցած տարիներու արցախեան գոր-ծունեութեան մասին, բանախօսը, իբրեւ ականատես եւ վկայ, հաստատեց, թէ այդ գործունեութեան ար-դիւնքը ալսօրուան ազատ ու անկախ Լ. Ղ. Հանրապե-տութիւնն է։

Ապա խօսք առաւ Արցախի մէջ Հ. Յ. Դ. Բիւրոյի լիազօր ներկայացուցիչ ընկ. Սերժ Ամիրխանեան։

«ՍԱՄՍՈՒՆԿ» ՄՈՒՏՔ ԿԸ ԳՈՐԾԷ ՀԱՅԱՍՏԱՆ

Երեւանի մէջ վերջերս բացումը կատարուեցաւ քո-րէական հանրալայտ «Սամսունկ էլէկտրոնիքս» ընկե-րութեան։ Այս ընկերութեան Մոսկուայի ներկայացուց-չութեան գլխաւոր տնօրէն Լին յայտնեց, թէ «Սամ-սունկ»ը աշխարհի մէջ կը գրաւէ երրորդ տեղը՝ ճափո-նական «Սոնի» եւ «Փանասոնիք» ընկերութիւններէն ետք, իսկ միջրոալիքային վառարաններու արտադրու-թեամբ՝ առաջինը։ Կը նախատեսուի ապագային խա-նութիւնը բանալ նաեւ Գլումբիի, Սեւանի եւ Էջմիածինի մէջ։

ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԷՆ

Վարչապետ Արմէն Սարգսեան ընդունեց Ա. Պ. Հ. ի միջ-պետական դրամատան նախագահ Վլատիմիր Մաշիքը եւ դրամատան պատասխանատու քարտուղար Սամուէլ Կանեցեան։

Հանդիպման ընթացքին խօսուեցաւ Ա. Պ. Հ. միջպե-տական դրամատան գործունէութեան, համագործակ-ցութեան ընդլայնման եւ Հայաստանի մէջ դրամատան ներկայացուցչութիւն հիմնելու մասին։

Վարչապետը նոյն օրը ընդունեց նաեւ Համաշխար-հային Դրամատան Միջազգային Ելեւմտական ընկերու-թեան էլեւմտական ծառայութեան տնօրէն Ֆիլիփ Լի-թարթը։

Սարգսեան եւ Լիթարթ քննարկեցին Միջազգային Ելեւմտական ընկերութեան կողմէ Հայաստանի մէջ հնա-րաւոր ներդրումներու վերաբերող հարցեր։

Հ. ՍԱՍՈՒՆԵԱՆԻ
ՆՈՐ ՀՍԱՅԷՆ
HAMPIG SASSOUNIAN C-88440
California Correctional Institution
Unit IV-B 4-A-104
P.O.Box 1906
Tehachapi, CA. 93581, U.S.A.

ՀՐԱՏՈՒԱԿԱՆ

ՄԻԶՈՑՆԵՐՈՒ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Դիկտեմբեր 13ին, Հա-յաստանի Լրագրողներու Տան մէջ տեղի ունեցաւ խորհրդաժողով մը, ներկա-յութեամբ հայաստանեան լրատուութեան միջոցներու ներկայացուցիչներուն։

Ժողովին անոնք՝ Բնաւր-կեցիւն Հայաստանի գանգը-ւածային լրատուութեան միջոցներու ընկերակցու-թեան կանոնադրութիւնը եւ «Զանգուածային Տեղեկա-սուութեան Միջոցների Մա-սին» օրինակը։

Առաջին հերթին Բնաւրկ-ման առարկայ դարձաւ գան-գուածային լրատուութեան միջոցներու ընկերակցու-թեան կանոնադրութիւնը։ Ներկաւորը ընդունեցին, եւ ամերաձեշտ՝ նկատեցին լրատուական կազմակեր-պութիւններու միաւորում՝ ստեղծելու գաղափարը։

Մակայն անոնց համար անուձեյի մնաց կարեւոր հարց մը, թէ արդեօք տեղե-ծուելիք վերափոխութիւ-նը կրնա՞յ իր գործունէու-թեան ընթացքին վերապա-հել նաեւ նկարպան ակնկա-լութիւններ ունենալու իրա-ւունքը, որովհետեւ մշակ-ւած փաստաթուղթին մէջ արձանագրուած էր, թէ ըն-կերակցութիւնը շաւ չ'են-տապնող կազմակերպու-թիւն է։ Հետեւաբար անոնք, յանգելով եզրակացութեան մը, որոշեցին, որ վերոյիշ-եալ հարցին լուծման համար պէտէ է սահմանուի ինքու-կեանք։ Առաջին, իբրեւ հա-սարակական կազմակեր-պութիւն, գանգուածային լրատուութեան միջոցներու ընկերակցութիւնը կրնայ արձանագրուիլ՝ սոսորկնե-րու կամ գլխաւոր խմբա-գլիններու խորհուրդի ան-կամներու կողմէ։ Սակայն կանոնադրութեան մէջ պէտէ է նշուի, որ այլ կազմակեր-պութիւնը կրնայ ունենալ նաեւ լոյր ձեռնարկութիւն։

Ներ, որոնք՝ լրագրական հարցերու շքանակին մէջ իրաւունք ունին զրաղելու անհատութեամբ։ Այնուհե-տեւ անոնց համար անլու-ծելի մնաց հարցին իրաւա-բանական կողմը։ Հետեւա-բար անոնք՝ որոշեցին ար-յարադատութեան նկատ-րարութեան հետ նշուի վի-րոյիշեալ սկզբունքներու ընդունման բոլոր կարելու-թիւնները։

Ապա խորհրդաժողովին մասնակցողները Բնաւրկե-ցին գանգուածային լրա-տուութեան միջոցներու մասին օրէնքին նախալիծը։ Մակայն անոնք՝ որեւէ եզրա-կացութեան չ'յանգնեցին, որովհետեւ օրինակովին մօ-տեցումը հասուածական էր եւ ոչ համալարգունած։

ԷՍԱՆԹԻ Ա. ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ 70 ՏԱՐԵԿԱՆ

Թրակիոյ Քսանքի երբեմնի հագարաւոր հայութիւն հաշուող Բաղդալ, կը գանը-ւի Հիւսիսային Յունաստան, Թեսաղոնի-կէէն մօտաւորապէս 225 Բմ. հեռաւորու-թեան վրայ։ Հայկական գաղութը ունի աւե-լի Բան 200 տարուան պատմութիւն։ 1922ին, Բագրի աղէան Աքեւեան Թրա-կիոյ պարպումէն հաք, Նիկովիլիոյ շքաւ-նէն, Ասափագարի, Կէլվէի, Պարսիգակի, Պուրսոյի, Էսիքէի, Ռաոսքոյի եւ այլ կողմերէն, ինչպէս նաեւ Պնոսոյ շքանէն մաս մը հայեր գաղթական կը հասնին Քսանքի։ Քիչ մամանակի մէջ գաղթական հայերը կը յաղթուն իմենի եկեղեցի, դրպ-րոց, անճաղակ գործաւորներու եւ աու-ներ։ Մեծ մասամբ շքանի հայերը եղած են մեծ վաճառականներ, գրադած են անաս-նաբուձութեամբ եւ մեղուարումութեամբ. ունեցած են բժիշկներ, տամաղնութիւնը եւ դեղագործներ։ Այսօր գաղութին պատ-կերը շատ փոխու է կը հաշուէ հազիւ 60 հոգի։ Շքանը այժմ խոնում է Հայաս-տանէն առժամեալ կամ մշտական կայ՝ հաստատող հագարաւոր հայաստանցիե-րով։ Որոնց համար վերջեւ շքանի հա-յութիւնը, քաղաքապետի եւս գործակ-ցարար, յաղորդաւ շարաքօրեալ հայկա-կան վարժարանի մը դրութիւնը հիմնել եկեղեցւոյ մօտիկ սրահին մէջ։ Իսկ եկեղե-ցին՝ Ս. Աստուածածին կը կոչուի, որ ներ-կայիս բոլորեց իր 70 տարիք։

ՄԱՐԳՌԵ ԻՐԱՒՈՒՆ-ՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՆՍԵՆՔԵԱՆ ՆՄԱՐԱԿԵՆ ՀԱՄԱԶԱՅՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷԶ ԿԻՇԽԷ ԲՈՆԱՂԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԶԵԻ

Մարդու Իրաւունքներու Պաշտպանութեան Միջազ-գային Օրուան առիթով Հայաստանի Հելսինքեան Կո-միտէն կատարած է յայտարարութիւն մը, որուն առա-ջին տողէն իսկ կը յայտնուի, թէ 1993 Բուականէն ի վեր Հայաստան կը դեկավարուի բռնապետական վար-չածէի ամբապղծման եւ ազատ խօսքի դէմ՝ պայքարի ուղիով։

Յայտարարութիւնը ի յայտ կը բերէ նաեւ այն իրա-դարձութիւններն ու դէպքերը, որոնք քաղաքական լար-ւածութեան եւ ճգնաժամի հիմք դարձած են Երկրին մէջ։ Այնտեղ կը նշուի, թէ Հայաստանի իշխանու-թիւններու այսպիսի գործողութիւնները ժողովրդա-վարութեան սկզբունքներու, մարդու հիմնական ազա-տութիւններու եւ իրաւունքներու ոտնահարման եւ երկ-րին մէջ գիւնուորա-ոստիկանական վարչաձեւ հաստա-տելու գործողութիւններու շարունակութիւնն են։

Անոնք կը պահանջեն քաղաքական բանտարկեալ-ներու ազատ արձակումը եւ կոչ կ'ուղղեն Հայաստա-նի իշխանութիւններուն ըննել կատարուած իրադար-ձութիւններուն հետ առնչուող պաշտօնական բոլոր անձերու գործունէութիւնները, դատական պատաս-խանատուութեան կանչել մարդու իրաւունքներու ոտ-նահարման համար անմիջական պատասխանատուե-րը, լուծել ուժային նախարարութիւններու աշխատա-կիցներուն ապօրինի գործողութիւններու ընթացքին տուժողներուն նկաթական հատուցում՝ տալու հարցը։

Վերջապէս, անոնք կոչ կ'ուղղեն Հայաստանի իշ-խանութիւններուն՝ դարդեցնել քաղաքական անաբեկ-չութիւնն ու պայքարը ազատ մ'ամուլին դէմ։

Ա.Ի.Մ.Ի ՅԱՏՈՒԿ ՄՐՅԱՆԱԿԸ

ԱՐՄԷՆ ՅՈՎՀԱՆԻՍԵԱՆ՝ ՄԱՐԴԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆԵՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԼԱՌԱԳՈՅՆ ՅՕԴՈՒԱԾԻՆ ՀԵՂԻՆԱԿԸ

1996ի ընթացքին մարդկային իրաւունքներու պաշտ-պանութեան նուիր

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

ՀՐԱՏԵԱՆ ԺԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

Անցնող քանի մը շաբաթներուն, իրարու ետեւէ 3 կազմածներ (2 ամերիկեացի եւ մէկ ռուսական) արձակուեցան դէպի Հրատ՝ մօտէն ծանօթանալու համար Երկրին ամէնէն մօտիկ մոլորակին, որուն գաղտնիքները տակաւին չեն բացայայտուած:

Մինչ ամերիկեան *Մարս Կոպըլ Սըրվէյըրը* եւ *Մարս Փաթֆայնտըրը* այժմ կ'ուղղուին դէպի Կարմիր մոլորակը, ռուսական *Մարս 96ի* առաքելու-

թիւնը ցաւալի վախճան ունեցաւ, մեծ յուսախաբու-թիւն պատճառելով աստղագէտներուն:

Հակառակ այս ծախողութեան, սակայն, գիտնականները սրած են իրենց պնդումները եւ անհամբեր տեղեկութիւններ կը սպասեն Հրատէն՝ միաժամանակ պատրաստելով մօտիկ ապագայի դէպի Հրատ այլ առաքելութիւններ եւ Գոյնիսկ՝ աստղաճառորդներու ուղեւորութիւններ:

լոմերի:

ՆԱՍԱ-ի համաձայն, օդա-լին առաքելութիւնը շրջա-պատում կազմածը կրնայ 8 յարկանի շէնքի մը բարձ-րութեամբ ոստում կատա-րել եւ նման բազմաթիւ ոս-տումներէ ետք՝ կայուն պատ-նալ:

Փարֆայնտըրը Հրատ կը փոխադրէ 10 էկ. կշռող եւ 6 անկիւններու վրայ ընթացող փոխադրակառէ մը՝ *Սոնոր-նըր*, որ ժամական առաւել-քան ժամական 43.500 էկ-լոմէրէն էջի պահուն պի-տի հասնի ժամական 48 էկ-

րոյ օժանդակութեամբ: Փարֆայնտըրի արագու-թիւնը ժամական 43.500 էկ-լոմէրէն էջի պահուն պի-տի հասնի ժամական 48 էկ-

ՄԱՐՍ ԿԼՈՂԵԼ
ՍՈՐՎԵՅՐԸ

Հրատեան ներխուժումին նորագոյն արեւմտակողմ-քանակաւ Նոյեմբեր 7ին, երբ ՆԱՍԱ-ի *Մարս Կոպըլ Սըրվէյըրը* 696 միլիոն էմ. 10 ամսուան միջմոլորակա-յին ուղեւորութեան ձեռ-նարկից՝ բեռնուած *Տիւրա 2* տիպի երթիւնի մը վրայ:

Արձակուեցան նուազ քան մէկ ժամ ետ *Սըրվէյըրը* բաժնուեցաւ երթիւնի 3րդ յարկէն եւ իրեն համար երջ-յուած «նախնի» բեռնից:

Մէկ բուն կշռող անջրպի-տանուուն ծրագիրը մշակ-ւած եւ ապա անկալ շինուած էր համեմատաբար կարճ ժամանակամիջոցի մը մէջ՝ փոխարինելու համար ՆԱ-ՍԱ-ի մէկ միլիոն առաքելու-ծած *Մարս Օպորթյուր* ան-ջրպիտանուը, որ 1993ին հասկանալի գործը կ'ան-կառնէր: Կարմիր մոլորակին շուրջ ծիրի վրայ հաստատուելէ ետեւի մը օր առաջ միայն:

Սըրվէյըրը իր նախնորդին փոխարինած գիտական 7 կազմածներուն ինքզին ըն-մանակները կը փոխադրէ, սակայն անկալ նուազ ար-ժամ է 115 միլիոն տոնայ:

Երազարուած է, որ 12 Նոյեմբեր 1997ին անջր-պիտանուը Հրատի շուրջ հաւ կրածու ծիրի մը վրայ


հաստատուի: Ապա անկալ աւելի ցած ծիրի վրայ պիտի իջ-նէ եւ մօտէն պիտի գործէ, երաւեան նստ միմոլորակէն ներս:

367 էմ. բարձրու-թեւէ մը անոր նկար-չական յատուկ մի-էնեան մակերեսին վրայ իրեն պիտի տեսնէ: Հրատեան մէկ տարուան աւա-րին (երկրին 687 օրերուն կը համա-պատասխանէ) *Սըր-վէյըրը* երկրորդի մը աչի մոլորակին 99 առ հա-րիւրի բարեւար «գծած» պի-տի ըլլայ:

Այլ կազմածներ հրատ-եան մակերեսին քաղաքու-թիւնը պիտի նշուին եւ պիտի փորձեն գտնել ջուրի ետե-ւեր, որ կ'անհի համար կիմ-նական է:

Առաջնութեան պատա-սխանաւոր կ'էն Գոնիկիմ մէկը, քէ արտասովոր այս առաջնութեան հետեւում-նիւրէն մէկը պիտի ըլլայ Հրա-տի մասին ցարդ գրուած ան-դիկութիւնները կրկին գրել:

Թեւեւ անջրպիտանուը կ'անհի գոյութիւնը ուղ-ղակիորէն նշմարող որեւէ միւսին պիտի չի փոխադրէ, սա-կայն անկալ կրնայ նշուի ապագայ մարդամի բնակե-



Մարս Կոպըլ Սըրվէյըրը Հրատին ամբողջ մակերեսին քարտէսը «պիտի գծէ»: Միւս կողմէ, անհկա օրական Հրատի ամպերը պիտի նկարէ եւ անոնց շարժումներուն մասին տեղե-կութիւններ պիտի հաղորդէ:

րոյ համար վայրեր, ուրիկ կարելի է ժայռային քիւր-նիւր հաւաքել:


ՄԱՐՍ ՓԱԹՖԱՅՆՏԸ

Հակառակ անոր, որ *Մարս Փարֆայնտըրը* Մարս Կոպըլ Սըրվէյըրէն գրեթէ մէկ ամիս ետ մարդայ ելաւ, անկալ 2 ամիս աւելի կա-նուի պիտի հասնի Հրատ (Յուլի 4, 1997ին):

Նրա մէկ ինչ ծրագրու-ածին նման ընթացող, 196 միլիոն տոնայ արժամ կազ-մածը մեծ արագութեամբ մօտէն պիտի գործէ, երա-տեան միմոլորակէն ներս: Ա-նոր արագութիւնը պիտի միջմոլորակային պիտի օդային հսկող առաքելու-

ՄԷԿ ՕՐՈՒՄՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

300 միլիոն տոնայ ար-ժամ ռուսական Մարս 96ի առաքելութիւնը մէկ օր միայն տեսնց: Նոյեմբերի կէսերուն, Ղազախստանի Պալքոնուր կեդրոնէն ար-ձակուած անջրպետանաւը չէր կրցած Երկրի ծիրէն դուրս գալ եւ արձակուե-լէն օր մը ետք Հարաւային ինդոնեզիականի մէջ ջախ-ջախուած էր (գէթ անոր բեկորները) Աւստրալիոյ մէջ ստիպողական վիճակի դրութիւն ստեղծելով:



Մարս 96ի 2 կայանները գիրեց պաշտպանող պող-պատեայ 2 գնդակներուն միջոցով էջը պիտի կատա-րէին Հրատի վրայ:

Առաքելութեան ձախ-ղութիւնը մեծ հարուած էր ո՛չ միայն ռուսական ան-ջրպետագնացութեան մարզին, այլ նաեւ՝ անջր-պետագնացութեան ճար-տարարութեան ընդհան-րապէս, եւ մանաւանդ՝ բո-լոր այն գիտնականներուն (ռուս, թէ օտար), որոնք չուրջ 10 տարի աշխատած

են պատրաստելու համար այս ծրագիրը: Թուսիա 122 միլիոն տո-նայի ներդրում մը կատա-րած էր Մարս 96ի կառուց-ման համար, իսկ 20 այլ եր-կիրներ (ներառեալ՝ Մ. Նա-հանգներ) չուրջ 180 մի-լիոն տոնայ ծախսած են ա-նոր փոխադրած գիտական կազմածներուն համար:

ՓԼԻԵԹՈՆԻՈՒԹԻՒՆ ԳՈՐ-ԴԱՆՈՒԹԵԱՆ ԻՄԱՍԻՆ ԻՏԱԼԻԱՆՈՒԹԻՒՆԵՐ

Մարս 96ի ջախջախու-մը հարցականներ կը ստեղ-ծէ անջրպետանաւերուն մէջ մահացու փլութոնի-մին գործածութեան շուրջ, կ'ըսեն ամերիկացի գիտնա-կաններ:

Զիյի արեւմուտքը, ինդոնեզիականի մէջ ջախ-ջախուած անջրպետանաւը 270 կրամ չողովարակ փլութոնի մը 238 կր փո-խադրէր: Սակայն Թուսիոյ անջրպետագնացութեան գործակալութեան պա-տասխանատուներէն Եու-րի Միլով ջախջախումէն ետեւի միջնակէս ետք յայտա-րարած էր, թէ փոքրիկ ըն-դունարանները, որոնք կը պարունակեն մահացու նիւթը, փտանգ չեն սպառ-նար անջրպետանաւուն քայքայումէն ետք:

Ամերիկացի կարգ մը գիտնականներ կ'ըսեն, թէ Մարս 96ի ջախջախումը առիթ մըն է վերատեսու-թեան ենթակայելու անջր-պետանաւերուն մէջ ռուս-նիւթի կամ ջերմութեան համար օգտագործուող նիւթերու հարցը:

Ո՞Չ ԱՌԱՋԻՆ ԶԱԽԶԱԽՈՒՄԸ

● Ամերիկեան *Սքայլէյ* անջրպետանաւը 1979ին արեւմտեան Աւստրալիոյ վերեւ Երկրին մթնոլորտէն ցերս մուտք գործած էր առանց վնասներ պատճառելու:

● Ռուսական *Ջոսմոս* արբանակ մը 1987ին ջախջախուած էր Զանաւայի անմարդաբնակ մէկ վայրի մէջ:

● Խորհրդային *Սալիուր 7* անջրպետային խա-րիսը Երկրին մթնոլորտին մէջ կրկին մուտք գործած էր եւ անոր բեկորները հաւանաբար Աւ-լանտեան ովկիանոսին մէջ ջախջախուած են, թէւ կ'ըսուի, թէ կարգ մը կտորներ Արժանթինի մէջ գտնուած են:


Ինչ կը վերաբերի *փլութոնիում* օգտագործող անջրպետանաւերու, ամերիկեան անջրպետագը-նացութեան ծրագիրին սկսումէն ի վեր, ամե-րիկեան Գնաց 3 անջրպետանաւերը ջախջախուած կամ անոնց առաքելութիւնը ծախողած է: 1964ին պատահած արկածի մը հետեւանքով Երկրի մա-կերեսէն 80 քմ. բարձրութեան վրայ 100 կրամ *փլութոնիում* տարածուած էր:

ԴԵՊԻ ՀՐԱՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱ կը մշակէ ծրագիրներ՝ ճաստղաճառորդներ Հրատ դրելու, քաղաքական կանաչ լույսը ստանալէն 8 տարի ետք, կ'ըսէ այն գիտնականը, որ այս ծրագի-րին պատասխանատու է:

Էրիք Մըքքենրի Պի. Սի. կայանին յայտնած է, թէ այս պաշտօնին կանչուած է ՆԱՍԱ-ի այս տարուան այն յայտարարութեանէն ետք, թէ հրատեան ժայռի բե-կորի մը մէջ նախնական կեանքի գոյութեան փաստ գտնուած է:

Ըստ Մըքքենրիի, մարդ դրելը կենսական է, որով-հետեւ մարդամիջնակներու համար կրնայ անկարելի ըլլալ պատասխանել բանալի այն հարցումին, թէ արդ-եօք կեանք գոյութիւն ունի՝ Հրատի վրայ:



Մարդիկ ե՞րբ պիտի կարենան արդեօք Հրատ այցելել եւ այս գծուած նկարը իրականութիւն դարձնել:

Գիտնականը կը յայտնէ, թէ ամէնէն մեծ մարտանը-րաւերը Արեգակնային դրութեան մէջ Երկրին ամէնէն մօտիկ դրացին մարդ դրելու առաքելութեան պա-հանջած գումարները կրնատելն է:

Կարելի է որեւէ առեւ Հրատ մարդ դրել, կը հա-ւաստէ Մըքքենրի, սակայն հարցը այն է, թէ ինչպէ՞ս կարելի է ասիկա ընել անցեալին նախատեսուած գու-մարներէն նուազ ծախսերով, կ'ըսէ ան:

Պի. Սի. կը հաւորդէ, որ պաշտօնապէս ՆԱՍԱ կը յայտնէ, թէ դեպի Հրատ մարդ դրելը ներկայիս օրա-կարգի վրայ չէ:



Սոնորնըր փոխադրակառը (65 սմ. երկայնք, 48 սմ. լայնք եւ 32 սմ. բարձրութիւն) պիտի հետազօտէ Հրատի մակերեսը:

Արեւուն ուժանիւրով բաւող փոխադրակառը Գաւառիւնայի ՆԱՍԱ-ի ձեռ-Փրոֆայլըն Լէպրէրրիի խումբ մը գիտնականներու կողմէ պիտի կշուի: Անկալ կը կրնալ քաղաքական միւսնա-ներ, որոնք կարողութիւն ունին 1 մմ. միւսնաւած մարման մասնաւոր լինելու ցոյց տալու, ինչպէս նաեւ՝ յատուկ կազմած մը, որ ժայ-ռերուն քաղաքային լինելը կրնայ ուսումնասիրել:

Մարս Փարֆայնտըրը կարողութիւն ունի 30 օր բանելու, սակայն գիտնա-կաններ անկարելի չեն նկա-տել, որ անկալ բազմաթիւ ամիսներ շարունակ գոր-ծել:

